

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

« ---»----- 2019թ.

N ----Ա

**ՈՐՈՇՈՒՄ**

**ԵՐԵՎԱՆԻ ԱԶԱՓՆՅԱԿ ԹԱՂԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ  
2009 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 2-Ի N 38 ՈՐՈՇՈՒՄՆ  
ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով ՀՀ վարչական դատարանի 2017 թվականի սեպտեմբերի 7-ի թիվ ՎԴ/5908/05/12 օրինական ուժի մեջ մտած վճիռը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 110-րդ հոդվածի 1-ին մասով, 22-րդ հոդվածով, քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 5-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասով՝

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. Անվավեր ճանաչել Երևանի Աջափնյակ թաղային համայնքի ավագանու 2009 թվականի ապրիլի 2-ի «Աջափնյակ թաղային համայնքի սեփականություն հանդիսացող Շինարարների փողոցի հ.2 շինությունն աճուրդային կարգով օտարելու մասին» N38 որոշումը:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

## ՏԵՂԵԿԱՆՔ- ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

### «Երևանի Աջափնյակ թաղային համայնքի ավագանու 2009 թվականի ապրիլի 2-ի N 38 որոշումն անվավեր ճանաչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման անհրաժեշտության մասին

Երևանի քաղաքապետի 29.11.2007 թվականի հ.5184-Ա որոշման 1-ին կետի համաձայն՝ բազմաբնակարան շենքերին կից /շենքի ծավալից դուրս/ ինքնակամ իրականացված կառույցները ճանաչվել են օրինական:

Երևանի քաղաքապետի 30.07.2008 թվականի հ.3505-Ա որոշման 1-ին կետի համաձայն՝ Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի միավորներին տրամադրվել են հասցեներ:

ՀՀ ԿԱ ԱԳԿ պետական կոմիտեի «Դավիթաշեն» տարածքային ստորաբաժանման կողմից 10.10.2008 թվականին ՀՀ Կառավարության 21.12.2006 թվականի հ.1923-Ն որոշման, Երևանի քաղաքապետի 29.11.2007 թվականի հ.5184-Ա և 30.07.2008 թվականի հ.3505-Ա որոշումների հիման վրա Երևանի Շինարարների փողոցի հ.2 շենքի թիվ 57 հասցեում գտնվող 51.0քմ մակերեսով ոչ բնակելի տարածքի՝ թիվ 57 շինության նկատմամբ գրանցվել է Աջափնյակ թաղային համայնքի սեփականության իրավունքը /վկայական՝ հ.2458399/:

Երևանի Աջափնյակ թաղային համայնքի ավագանին 02.04.2009 թվականին կայացրել է «Աջափնյակ թաղային համայնքի սեփականություն հանդիսացող Շինարարների փողոցի հ.2 շինությունն աճուրդային կարգով օտարելու մասին» հ.38 որոշումը:

17.04.2009 թվականին Երևանի Աջափնյակ թաղային համայնքի աճուրդային հանձնաժողովի կողմից կազմվել է գույքի /օբյեկտի/ աճուրդով մասնավորեցման մասին թիվ 2 արձանագրությունը:

Երևանի Աջափնյակ թաղային համայնքի ղեկավարը 29.04.2009 թվականին կայացրել է «Համայնքի սեփականություն հանդիսացող Շինարարների փողոցի հ.2 շենքի ոչ բնակելի 51.0քմ թիվ 57 տարածքն աճուրդային կարգով օտարելու մասին» հ.42 որոշումը, որի հիման վրա աճուրդային վաճառքի արդյունքում հաղթող ճանաչված Լիպարիտ Շահինյանի հետ 29.04.2009 թվականին կնքվել է տարածքի առուվաճառքի պայմանագիրը, որից ծագող իրավունքները 08.05.2009 թվականին ենթարկվել են պետական գրանցման:

ՀՀ վարչական դատարանը, քննելով թիվ ՎԴ5908/05/12 վարչական գործն ըստ հայցի Գրետա Ավետիսյանի, Զարիկ Խաչատրյանի, Վալիդա Խայրունցի, Ժանետա Դավթյանի, Յուրի Բուրյակինի և Հեղինե Մանասյանի ընդդեմ ՀՀ կառավարության, Երևանի քաղաքապետարանի, ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Երևանի տարածքային ստորաբաժանման, երրորդ անձ Լիպարիտ Շահինյանի՝ ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Դավթաշենի տարածքային ստորաբաժանման կողմից Շինարարների փողոցի թիվ 2 շենքի 51,0քմ մակերեսով ոչ բնակելի տարածքի թիվ 57 շինության նկատմամբ Աջափնյակ թաղային համայնքի անվամբ 10.10.2008 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը, Աջափնյակ թաղային համայնքի ավագանու 02.04.2009 թվականի «Երևան քաղաքի, Շինարարների փողոցի թիվ 2 շենքի թիվ 57 հասցեում գտնվող ոչ բնակելի տարածքը աճուրդային կարգով օտարելու մասին» հ.38 որոշումը, Աջափնյակ թաղային համայնքի

աճուրդային հանձնաժողովի կողմից **27.04.2009** թվականին կազմված գույքի (օբյեկտի) աճուրդով մասնավորեցման մասին թիվ **2** արձանագրությունը, Երևանի Աջափնյակ թաղային համայնքի ղեկավարի կողմից **29.04.2009** թվականին կայացված աճուրդային վաճառքի արդյունքը հաստատելու մասին **h.42** որոշումը, աճուրդում հաղթող ճանաչված Լիպարիտ Շահինյանի հետ **20.04.2009** թվականին կնքված տարածքի առուվաճառքի պայմանագիրը, Շինարարների փողոցի թիվ **2** շենքի թիվ **57** տարածքի նկատմամբ Լիպարիտ Շահինյանի սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, **07.09.2017** թվականի վճռով հայցն ամբողջությամբ բավարարել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը, քննելով թիվ **ՎԴ/5908/05/12** վարչական գործով ՀՀ վարչական դատարանի կողմից **07.09.2017** թվականին կայացված վճռի դեմ Երևանի քաղաքապետարանի ներկայացրած վերաքննիչ բողոքը, **21.06.2018** թվականի որոշմամբ այն ամբողջությամբ մերժել է՝ վճիռը թողնելով անփոփոխ:

ՀՀ վճռաբեկ դատարանի **24.10.2018** թվականի որոշմամբ թիվ **ՎԴ/5908/05/12** վարչական գործով ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի **21.06.018** թվականի որոշման դեմ Երևանի քաղաքապետարանի անունից բերված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է:

ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի **15.02.2019** թվականի **ԱՏ-13/02/2019-1-0449** տեղեկանքի համաձայն՝ Երևան քաղաքի Շինարարների փողոցի **h.2** շենքի **h.57** շինություն հասցեի անշարժ գույքի նկատմամբ իրավունքի դադարեցման պետական գրանցում չի կատարվել:

ՀՀ վարչական դատարանը **07.09.2017** թվականի թիվ **ՎԴ5908/05/12** օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված է համարել, որ Երևան քաղաքի Շինարարների փողոցի թիվ **2** շենքի **51.0** քմ մակերեսով թիվ **57** շինությունը «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքի **6**-րդ հոդվածում ամրագրված իրավանորմի ուժով հանդիսացել է Շինարարների փողոցի թիվ **2** բազմաբնակարան շենքի շինությունների սեփականատերերի ընդհանուր բաժնային սեփականությունը, քանի որ այն ի սկզբանե հանդիսանում է այդ շենքի տեխնիկական հարկը, որի պարագայում դրա նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը գրանցվել չէր կարող:

ՀՀ վարչական դատարանի կողմից **19.02.2019** թվականին տրված թիվ **ՎԴ/5908/05/12** կատարողական թերթի հիման վրա ՀՀ ԱՆ հարկադիր կատարման ծառայության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ բաժնի հարկադիր կատարող Ս.Միքայելյանի կողմից **21.02.2019** թվականին կայացվել են «Կատարողական վարույթ հարուցելու» և «Պարտապանին որոշակի գործողություններ կատարելուն պարտադրելու կամ որոշակի գործողությունների կատարումից ձեռնպահ մնալուն հարկադրելու մասին» որոշումները /կատարողական վարույթ՝ թիվ **04957496/**:

Քաղաքացիական դատավարության օրենսգրքի **5**-րդ հոդվածի **5**-րդ մասի համաձայն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը, ինչպես նաև դատարանի պահանջները կատարման համար պարտադիր են դրանց հասցեատերերի համար և ենթակա են կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի **38**-րդ հոդվածի **1**-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտն անվավեր է ճանաչվում իրավաստեղծ մարմնի, դրա իրավահաջորդի կամ համապատասխան լիազորություններով օժտված մարմնի ակտով, եթե

ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ընդունվել կամ գործել է՝ հակասելով ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտի:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի **38**-րդ հոդվածի **2**-րդ մասի համաձայն՝ անվավեր ճանաչված նորմատիվ իրավական ակտն իր իրավական ուժը կորցնում է այն անվավեր ճանաչելու մասին ակտի ուժի մեջ մտնելու պահից (*ex nunc*), բացառությամբ սույն հոդվածի **3**-րդ մասով սահմանված դեպքերի:

ՀՀ վարչական դատարանի **07.09.2017** թվականի թիվ ՎԴ**5908/05/12** օրինական ուժի մեջ մտած վճռի և հարկադիր կատարման ծառայության **21.02.2019** թվականի «Կատարողական վարույթ հարուցելու» և «Պարտապանին որոշակի գործողություններ կատարելուն պարտադրելու կամ որոշակի գործողությունների կատարումից ձեռնպահ մնալուն հարկադրելու մասին» որոշումների պահանջները կատարելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել ընդունել «Երևանի Աջափնյակ թաղային համայնքի ավագանու **2009** թվականի ապրիլի **2**-ի N **38** որոշումն անվավեր ճանաչելու մասին» Երևան քաղաքի ավագանու համապատասխան որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

## ՏԵՂԵԿԱՆՔ

**«Երևանի Աջափնյակ թաղային համայնքի ավագանու 2009 թվականի ապրիլի 2-ի N 38 որոշումն անվավեր ճանաչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտության կամ բացակայության մասին**

Հաշվի առնելով, որ ՀՀ վարչական դատարանի **07.09.2017** թվականի թիվ **ՎԴ/5908/05/12** օրինական ուժի մեջ մտած վճռով անվավեր է ճանաչվել Երևանի Աջափնյակ թաղային համայնքի ավագանու **2009** թվականի ապրիլի **2-ի N38** որոշումը և Երևանի Աջափնյակ թաղային համայնքի ղեկավարի **2009** թվականի ապրիլի **29-ի** «Համայնքի սեփականություն հանդիսացող Շինարարների փողոցի **հ.2** շենքի ոչ բնակելի **51.0**քմ թիվ **57** տարածքն աճուրդային կարգով օտարելու մասին» **N42** որոշումը՝ «Երևանի Աջափնյակ թաղային համայնքի ավագանու **2009** թվականի ապրիլի **2-ի N38** որոշումն անվավեր ճանաչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ անհրաժեշտություն է առաջացել ընդունել նաև Երևանի քաղաքապետի համապատասխան որոշում՝ Երևանի Աջափնյակ թաղային համայնքի ղեկավարի **2009** թվականի ապրիլի **29-ի N42** որոշումն անվավեր ճանաչելու մասին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

## ՏԵՂԵԿԱԼՔ

**«Երևանի Աջափնյակ թաղային համայնքի ավագանու 2009 թվականի ապրիլի 2-ի N 38 որոշումն անվավեր ճանաչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում սպասվելիք փոփոխությունների մասին**

«Երևանի Աջափնյակ թաղային համայնքի ավագանու 2009 թվականի ապրիլի 2-ի N 38 որոշումն անվավեր ճանաչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտների նվազեցում կամ ծախսերի ավելացում չի առաջանում:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**